Ընդունված է՝

Եվրասիա միջազգային
համալսարանի
գիտական խորհրդի նիստում
«16» 09 2022թ.

Գիտական խորհրդի նախագահ

_____ Ս.Ոհանյան

Հաստատված է՝

Եվրասիա միջազգային
համալսարանի հիմնադիրների
խորհրդի նիստում
«18» 10 2022թ.

Նիստի նախագահող

_____ Ա.Ս.Ոհանյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության

(նոր խմբագրությամբ)

Երևան, 2022

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Եվրասիա միջազգային համալսարան» ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը (այսուհետ՝ համալսարան) կրթական, գիտական և մշակութային ինքնավար, բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է կրթական տարբեր մակարդակներում և գիտության տարբեր ուղղություններով բարձրագույն, հետբուհական ու լրացուցիչ կրթության և գիտական հետազոտությունների կազմակերպմանը:

2. Համալսարանը իր գործունեությունը իրագործում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տրամադրած լիցենզիաների և պետական հավատարմագրման հիման վրա:

3. Համալսարանի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

4. Համալսարանը շահույթ ստանալու նպատակ հետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ պետական առևտրային կազմակերպություն է, որը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված, իր խնդիրներին համապատասխան իրավունքներ ու պարտականություններ: Համալսարանը քաղաքացիաիրավական գործառույթներում հանդես է գալիս հիմնադրի անունից:

5. Համալսարանը իր գործունեությունը իրականացնում է ՀՀ սահմանադրության, քաղաքացիական օրենսգրքի և կրթության ու գիտության ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

6. Համալսարանն իր գործունեության նպատակներին համապատասխան կարող է մատուցել կրթական (հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն, հետբուհական), գիտական, հետազոտական, փորձագիտական, ինչպես նաև՝ մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման վճարովի ծառայություններ՝ օրենքով սահմանված կարգով:

7. Համալսարանն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվ:

8. Համալսարանն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ /հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով/ կլոր կնիք, դրոշմակնիքներ և բլանկներ:

9. Համալսարանի անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ Եվրասիա միջազգային համալսարան.
- հայերեն կրճատ՝ ԵՄՀ.
- ռուսերեն լրիվ՝ Международный Университет Евразия.
- ռուսերեն կրճատ՝ МУЕ.
- անգլերեն լրիվ՝ Eurasia International University.
- անգլերեն կրճատ՝ EIU:

10. Համալսարանի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0014, Ազատության պողոտա № 24/2:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

11. Համալսարանի տեսլականն է լինել տարածաշրջանում ճկուն կառավարում ունեցող առաջատար կրթական հաստատություն, որը աշխատանքային շուկայի անընդհատ զարգացող պահանջներին համապատասխան պատրաստում է գործնական հմտություններով ու կարողություններով, տեսական և կիրառական գիտելիքներով օժտված բարձրագույն կրթությամբ մասնագետներ:

12. Համալսարանն իր հիմնական առաքելությունը նախանշում է երեք մակարդակներում՝ ուսուցում, հետազոտություն և հանրային ծառայություն՝ առաջնային դերակատարություն տալով արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը: Համալսարանի առաքելությունը, դրանից բխող արժեքներն ու առաջնահերթությունները, ինչպես նաև ռազմավարական նպատակներն ու խնդիրները սահմանվում են համալսարանի երկարաժամկետ ռազմավարությամբ, որը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաստատվում է Կառավարման խորհրդի կողմից:

13. **Համալսարանի նպատակներն ու խնդիրներն են՝**

1) բարձր մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումը և որակավորման բարձրացումը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումը և գիտամանկավարժական կադրերի վերապատրաստումը.

2) գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը.

3) կրթության և գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, մասնագիտությունների և մասնագիտացումների համակարգերի մշակումն ու արմատավորումը, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և ուղեցույցների ստեղծումը.

4) միջազգային արդյունավետ համագործակցության իրականացումը, Հայաստանում կրթության միջազգայնացմանը և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ՀՀ-ի ինտեգրմանը նպաստող ծրագրերի իրագործումը.

5) անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը՝ բարձրագույն և (կամ) հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու միջոցով.

6) բարձրագույն կրթությամբ աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը.

7) կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.

8) սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը.

9) գիտելիքների տարածումը, սովորողների կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

10) սովորողների մոտ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան գործնական հմտությունների և կարողությունների զարգացումը, աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը.

11) աշխատաշուկայի պահանջներին համապատասխան լրացուցիչ կրթության ծրագրերի (կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ, վերապատրաստումներ) իրագործումը.

12) սովորողների և երիտասարդության շրջանում կամավորության, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման, մարդու իրավունքների, ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության ու կայուն զարգացման գլոբալ օրակարգի արժեքների արմատավորումը.

13) տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ ընդհանուր (վարժարանային), նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի իրականացումը.

14) հրատարակչական և փորձագիտական ծրագրերի իրականացումը։

14. **Համալսարանն առաջադրված խնդիրներին համապատասխան իրավասու է՝**

1) իրականացնել բարձրագույն կրթություն, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված մակարդակների կրթական ծրագրեր, այդ թվում՝ լրացուցիչ.

2) ինքնուրույն ձևավորել իր կառուցվածքը, կանոնադրությամբ սահմանված կարգով իր կազմում ստեղծել մասնաճյուղեր, կենտրոններ, քոլեջներ, վարժարաններ, մասնագիտական և ոչ մասնագիտական թեքում ունեցող դպրոցներ, ամբիոններ և այլ ստորաբաժանումներ, հաստատել նրանց գործունեության ու կառավարման կարգը.

3) պետական կրթական չափորոշիչներին համապատասխան արտաքին և ներքին շահակիցների մասնակցությամբ մշակել և հաստատել համապատասխան մասնագիտությունների և մասնագիտացումների, ինչպես նաև լրացուցիչ կրթության տարբեր դասընթացների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, ինքնուրույն որոշել ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերն ու կարգը, հրատարակել ուսումնական և ուսումնամեթոդական գրականություն.

4) կազմակերպել տարբեր կրթական մակարդակներում սովորողների (դպրոց, վարժարան, միջին մասնագիտական կրթություն, բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, հայցորդություն) ընդունելություն (լիցենզիաների առկայության դեպքում).

5) ՀՀ օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն որոշել վարչական, ակադեմիական և գիտական կազմի համար սահմանված չափանիշները, իրականացնել մարդկային ներուժի մասնագիտական զարգացման ծրագրեր (վերապատրաստումներ, ատեստավորում), սահմանել հաստիքացուցակը, ընտրովի պաշտոններում ընտրության կարգը, անցկացնել դրանց ընտրությունները, իրականացնել աշխատողների ընտրություն, նշանակում.

6) շնորհել մասնագիտական կրթության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված որակավորման աստիճաններ, սահմանել և շնորհել համալսարանի պատվավոր կոչումներ, մեդալներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ.

7) ծավալել համագործակցություն միջազգային ասպարեզում, ստանալ դրամաշնորհներ, դրամաշնորհային ծրագրերում ներգրավել աշխատողներին և սովորողներին.

8) կնքել պայմանագրեր իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ.

9) վարձակալության հանձնել սեփականության իրավունքով պատկանող կամ իրեն ամրացված գույքը՝ օրենքով սահմանված կարգով։

15. **Համալսարանն իրավունք ունի իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝**

1) հանրակրթական, բարձրագույն, միջին և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպում.

2) դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում.

3) գիտամանկավարժական կադրերի և մասնագետների պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.

4) գիտական, հետազոտական, փորձագիտական ու խորհրդատվական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում.

5) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում, գրքերի ու տպագրական այլ նյութերի վաճառքի իրականացում.

6) ուսանողների և համալսարանի անձնակազմի և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում ու սպասարկում.

7) մշակութային միջոցառումների իրականացում.

8) կարճաժամկետ և երկարաժամկետ տարբեր դասընթացների կազմակերպում.

9) տեղեկատվական ծառայությունների մատուցում:

10) սեմինարների, կոնֆերանսների և այլ միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցում.

11) միջազգային ուսումնական, գիտական ու հետազոտական ծրագրերի իրականացում.

12) կանոնադրական նպատակներից բխող ձեռնարկատիարական գործունեության այլ տեսակներ։

16. Համալսարանը պարտավոր է գործել ՀՀ օրենսդրությանը, իր կանոնադրությանը համապատասխան, հրապարակել իր գործունեության մասին հաշվետվություններ, օրենքով սահմնված կարգով վարել գործավարություն և հաշվապահություն, տեղեկատվություն տրամադրել և հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին։

17. Համալսարանն իր գործունեության բոլոր ոլորտներում առաջնորդվում է օրինականության, ժողովրդավարության, հրապարակայնության, թափանցիկության, ինքնավարության, սովորողների, դասախոսների ու այլ աշխատակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ակադեմիական ազնվության և բարեվարքության սկզբունքներով և իր ռազմավարական ծրագրով ամրագրված արժեքներով։

18. Արգելվում է համալսարանում քաղաքական, կուսակցական և կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը։

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Համալսարանի կառավարումը հիմնված է ինքնավարության, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների վրա՝ ապահովելով համալսարանի աշխատողների, սովորողների ինչպես նաև արտաքին շահակիցների մասնակցությունը կարևորագույն հարցերի քննարկմանը: Համալսարանի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ հիմնադիրների խորհրդի (մասնակիցների ընդհանուր ժողով), համալսարանի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացման միջոցով:

20. Համալսարանի կառավարման բարձրագույն մարմինը հիմնադիրների խորհուրդն է (մասնակիցների ընդհանուր ժողովը): Հիմնադիրների խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որի գործունեությունն անժամկետ է:

21. Հիմնադիրների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են գործադիր մարմնի (ռեկտորի) կամ մասնակիցների կողմից: Հիմնադիրների խորհուրդն իր նիստը վարելու համար անդամների կազմից ընտրում է նիստի (ժողովի) նախագահին:

22. Հիմնադիրների խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Դրանք իրավազոր են համարվում Հիմնադիրների խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում, իսկ որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի առաջարկությամբ կամ խորհրդի մասնակիցների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

23. **Հիմնադիրների խորհուրդը՝**

1) հինգ տարի ժամկետով ընտրում (նշանակում) է համալսարանի ռեկտորին և անհրաժեշտության դեպքում դադարեցնում է նրա լիազորությունները.

2) հաստատում է համալսարանի կառավարման խորհրդի կազմը (անդամների ցուցակը) կամ կատարում դրանում փոփոխություններ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացված առաջադրումների կամ ընտրությունների արդյունքների հիման վրա.

3) հաստատում է համալսարանի ռեկտորի ընտրությունների ընթացակարգը.

4) իրականացնում է անշարժ գույքի հետ կապված ցանկացած գործարք.

5) հաստատում է համալսարանի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարման խորհրդի որոշումները:

6) լսում է տարեկան գործունեության, այդ թվում՝ ռազմավարական ծրագրի իրականացման մասին հաշվետվություն, ունի ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ նախատեսված այլ իրավասություններ:

24. Համալսարանի կառավարման խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որը ստեղծվում է հինգ տարի ժամկետով՝ սույն կանոնադրությանը համապատասխան, այդ ընթացքում խորհրդի անդամների հնարավոր մասնակի շրջափոխությամբ:

25. Կառավարման խորհրդի անդամների թիվը 16 է: Կառավարման խորհուրդը ձևավորվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, արտաքին շահակիցների (գործատուներ, շրջանավարտներ, փորձագետներ) և հիմնադիր-

ների խորհրդի ներկայացուցիչներից. յուրաքանչյուր խմբին տրվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 25%-ի չափով տեղեր (սահմանված քվոտա)։ Համալսարանի վարչական աշխատողները չեն կարող լինել համալսարանի կառավարման խորհրդի անդամ։

26. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից կառավարման խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում համալսարանի կրթագիտական գործունեություն իրականացնող կառուցվածքային միավորները (ամբիոններ, վարժարան, կենտրոն և այլն), իսկ ընտրությունը իրականացվում է գիտական խորհրդի նիստում։ Մասնավորապես՝

1) համալսարանի կրթագիտական գործունեություն իրականացնող կառուցվածքային միավորները պրոֆեսորադասախոսական կազմից սահմանված կարգի համաձայն առաջադրում են խորհրդի անդամության թեկնածուներ,

2) համալսարանի կառուցվածքային միավորների կողմից առաջադրված անձանց թեկնածուների ցանկից համալսարանի գիտական խորհուրդը սահմանված քվոտայի չափով ընտրում է կառավարման խորհրդի անդամներին՝ իր կողմից սահմանված կարգի համաձայն։

27. Համալսարանի ուսանողական խորհուրդը համալսարանի սովորողների համակազմից սահմանված քվոտայի չափով ընտրում է Համալսարանի կառավարման խորհրդի անդամներին՝ ուսանողական խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն։ Մասնավորապես՝

1) ուսանողական խորհրդի կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել և ընտրվել առնվազն մեկ տարի համալսարանում սովորած բարձր առաջադիմություն (առավելագույն միջին որակական գնահատականի 70%-ից բարձր առաջադիմություն) և ներհամալսարանական կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերող ցանկացած սովորող (ուսանող, ասպիրանտ).

2) ասպիրանտների դեպքում առաջադիմության շեմ չի սահմանվում։

28. Արտաքին շահակիցներից Համալսարանի կառավարման խորհրդի անդամության թեկնածուները (համալսարանի հետ ակտիվ համագործակցող գործատու ընկերությունների, գիտահետազոտական կազմակերպությունների, հասարակական միավորումների ղեկավարներ կամ ներկայացուցիչներ, շրջանավարտներ) կարող են առաջադրել համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ուսանողական խորհուրդը։ Առաջադրված անձանց ցուցակից՝ սահմանված քվոտայի չափով, համալսարանի գիտական խորհուրդն առաջնորդվելով իր կողմից սահմանված չափանիշներով, ընտրում է Կառավարման խորհրդի անդամներին։

29. Հիմնադիրների խորհուրդը կրթության, գիտության ու մշակույթի ոլորտների փորձագետների, ինչպես նաև նորարար ձեռնարկատերերի ու բարերարների շրջանից սահմանված քվոտայի չափով և իր կողմից սահմնաված չափանիշներով ընտրում է Համալսարանի կառավարման խորհրդի անդամների։

30. Համալսարանի կառավարման խորհուրդն իր կազմից (բացի սովորողների ներկայացուցիչներից) ընտրում է խորհրդի նախագահ։ Համալսարանի կառավարման խորհրդի նախագահը չի կարող լինել Համալսարանի հաստիքային (հիմնական) աշխատող։ Խորհրդի նախագահը պահպանում է ժամավճարի սկզբունքով համալսարանում դասա-

խոսելու իրավունքը: Նույն անձը չի կարող երկու անգամից ավել անընդմեջ ընտրվել Կառավարման խորհրդի նախագահ:

31. Համալսարանի կառավարման խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

1) խորհրդի նախագահին ներկայացրած իր դիմումի համաձայն,

2) եթե դադարել է խորհրդի անդամների կեսից ավելիի լիազորությունները և սահմանված կարգով այդ անդամների թափուր տեղերը համալրված չեն.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու, կամ դատապարտվելու դեպքում, կամ նրա մահվան պատճառով.

4) համալսարանի կառավարման խորհրդի անդամին ընտրող մարմնի որոշմամբ.

5) համապատասխան կարգավիճակով (ըստ պաշտոնի, համապատասխան կազմակերպությունում ղեկավար, համալսարանի սովորող, դասախոս և այլն) առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու կամ ուսանողի կարգավիճակը կորցնելու հետևանքով.

6) խորհրդի գործող կազմի լիազորությունների ժամկետը (հինգ տարի) լրանալու դեպքում կամ հիմնադիրների խորհրդի որոշմամբ.

7) նրա կողմից խորհրդի նիստերին երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայելու դեպքում՝ խորհրդի անդամների պարզ մեծամասնության որոշմամբ:

32. Համալսարանի կառավարման խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կանոնադրության պահանջներին համապատասխան՝ մինչև գործող խորհրդի լիազորությունների ժամկետի լրանալը:

33. Համալսարանի կառավարման խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումը և նոր անդամի ընտրության (այդ թվում՝ ժամկետը լրանալու կապակցությամբ նոր խորհրդի ձևավորման) գործընթացը իրագործվում է համալսարանի ռեկտորի կողմից՝ կանոնադրությամբ սահմանված կարգով:

34. Համալսարանի կառավարման խորհրդի երեք անգամ նիստ հրավիրելու և այն չկայանալու դեպքում կամ կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ նիստեր չգումարելու դեպքում հիմնադիրների խորհուրդը կարող է վաղաժամկետ դադարեցնել խորհրդի լիազորությունները, որից հետո սահմանված կարգով ձևավորվում է խորհրդի նոր կազմ:

35. Համալսարանի կառավարման խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ խորհրդի նախագահի կողմից: Դրանք իրավազոր են համարվում, երբ մասնակցում է կառավարման խորհրդի անդամների առնվազն 1/2-ը, բացառությամբ սույն կանոնադրության 38-րդ կետի 1-ին, 4-րդ, 6-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված օրակարգային հարցերի, երբ անհրաժեշտ է խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցությունը նիստին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

36. Արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ առավելագույնը մեկամսյա ժամկետում՝ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի կամ համալսարանի ռեկտորի առաջարկությամբ:

37. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել առկա, հեռավար կամ համակցված (առկա և հեռավար եղանակների զուգակցմամբ) եղանակներով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև՝ հարցման եղանակով: Խորհրդի նիստերը արձանագրվում են, իսկ հեռավար կամ համակցված եղանակով անցկացված նիստերը՝ նաև ձայնագրվում: Կառավարման խորհրդին վերապահված լիազորությունները չեն կարող փոխանցվել համալսարանի այլ մարմնին:

38. **Համալսարանի կառավարման խորհուրդը՝**

1) ընտրում է խորհրդի նախագահ և քարտուղար.

2) հաստատում է իր աշխատակարգը, այդ թվում՝ խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության ընթացակարգերը.

3) լսում և գնահատում է ռեկտորի հաշվետվությունը համալսարանի տարեկան գործունեության մասին.

4) ռեկտորի ընտրությունների կարգի համաձայն իրականացնում է ռեկտորի թեկնածուների կամ թեկնածուի բաց մրցութային ընտրություն և հիմնադիրների խորհրդին է ներկայացնում ռեկտորի թեկնածուներին՝ հինգ տարի ժամկետով նշանակելու առաջարկությամբ, քննարկում և քվեարկում է ռեկտորին անվստահություն հայտնելու վերաբերյալ հիմնադիրների խորհուրդ առաջարկություն ներկայացնելու հարցը.

5) քննարկում և հաստատում է համալսարանի կառուցվածքը, ստեղծում և լուծարում է կառուցվածքային միավորները.

6) քննարկում և հաստատում է համալսարանի ռազմավարական ծրագիրը.

7) քննարկում և հաստատում է ռազմավարական ծրագրից բխող համալսարանի գործունեությունը առաջնորդող հիմնական քաղաքականությունը սահմանող փաստաթղթերը (ռազմավարական ծրագրեր, հայեցակարգեր, քաղաքականություններ և այլն), համալսարանի բարեվարքության կանոնակարգը (էթիկայի կանոններ).

8) լսում և գնահատում է ռազմավարական պլանի, որակի ապահովման և այլ ծրագրային փաստաթղթերի իրականացման մասին ռեկտորի կամ այլ պաշտոնատար անձանց հաշվետվությունները.

9) քննարկում և հաստատում է համալսարանի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջեն), դրանում կատարում փոփոխություններ, ինչպես նաև հաստատում բյուջեի կատարողականի մասին հաշվետվությունները, իրականացնում է Համալսարանի գործունեության ֆինանսական հսկողությունը (աուդիտ իրականացնող ընկերության ընտրություն և այլն).

10) ընդունում է համալսարանի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումներ, դրանք ներկայացնում համալսարանի հիմնադիրների խորհրդի հաստատմանը.

11) համալսարանի բարեվարքության կանոնակարգի համաձայն՝ բարեվարքության հանձնախմբի եզրակացության հիման վրա փակ գաղտնի քվեարկությամբ որոշում է կայացնում համալսարանում բարձր ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց (պրոռեկտոր, ամբիոնի վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն) աշխատանքային լիազորությունները կասեցնելու վերաբերյալ (որը իրագործվում է ռեկտորի համապատասխան հրամանով),

12) կանոնադրությամբ սահմնված դեպքերում որոշում է ընդունում խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

13) քննարկում է համալսարանի գործունեության հետ կապված կարևորագույն հարցեր։

39. **Կառավարման խորհրդի նախագահը՝**

1) հրավիրում և վարում է կառավարման խորհրդի նիստերը,

2) ստորագրում է կառավարման խորհրդի որոշումներն ու նիստերի արձանագրությունները.

3) խորհրդի լիազորություններն արդյունավետ իրականացնելու և առանձին հարցեր խորհրդի քննարկմանը նախապատրաստելու նպատակով կառավարման խորհրդի համաձայնությամբ ստեղծում է ժամանակավոր հանձնաժողովներ կամ հանձնախմբեր.

4) սույն կանոնադրության 31-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված հիմքով խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին առաջարկություններ.

5) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է հիմնադիրների խորհրդի նիստին, հաղորդումներ ներկայացնում ԵՄՀ գործունեության վերաբերյալ, առաջարկություններ ներկայացնում հիմնադիրների խորհրդին այդ մարմնի իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.

6) կատարում է խորհրդի լիազորություններից բխող այլ պարտականություններ։

40. Կառավարման խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը։ Կառավարման խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները և իրականացնում խորհրդի աշխատակարգով նախատեսված այլ գործառույթներ։

41. Կառավարման խորհրդի անդամները իրենց լիազորությունները իրականացնում են հասարակական հիմունքներով։ Կառավարման խորհրդի անդամները իրավունք ունեն ներկայացնել առաջարկություններ խորհրդի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ, նախապատրաստել և խորհրդի քննարկմանը ներկայացնել առաջարկություններ, ստանալ տեղեկատվություն համալսարանի գործունեության մասին, կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել գիտական խորհրդի նիստերին։

42. Կառավարման խորհրդի անդամները պարտավոր են մասնակցել խորհրդի նիստերին, իրենց պարտականությունները կատարելիս գործել՝ ելնելով ՀՀ օրենսդրության, համալսարանի կանոնադրության և ներքին այլ իրավական ակտերի պահանջներից, ինչպես նաև համալսարանի շահերից։

43. **Համալսարանի գիտական խորհուրդը** համալսարանի ռեկտորի նախագահությամբ գործող ուսումնամեթոդական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կառավարման կոլեգիալ մարմին է։ Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը երեք տարի է։ Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն վեց անգամ։

44. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) լիցենզիայով սահմանված տեղերի շրջանակում, համալսարանի ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերը, վճարովի ուսուցման վարձավճարների չափերը, սահմանում է դրա հետ կապված առանձին արտոնությունները.

3) համալսարանի ռեկտորի ներկայացմամբ կառավարման խորհդին ներկայացնում է առաջարկություններ համալսարանի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ.

4) հաստատում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը, ներքին կարգապահական կանոնները, կարգերը, ուղեցույցները, նորմերը և համալսարանի ուսումնագիտական և այլ գործունեությունը կանոնակարգող ներքին այլ իրավական ակտերը.

5) քննարկում և հաստատում է մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը, հաստատում է կրթական ծրագրերը.

6) պարբերաբար քննարկում է ռազմավարական պլանի և այլ ծրագրային փաստաթղթերի իրականացման և կրթության որակի ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ զեկույցներ.

8) քննարկում և որոշում է համալսարանի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում և գնահատում է գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների արդյունքների մասին.

9) հաստատում է համալսարանի յուրաքանչյուր կիսամյակի պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը, գիտական խորհրդի կանոնակարգի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցութային համալրման կանոնակարգի համաձայն իրականացնում է պրոֆեսորադասախոսական մի շարք պաշտոնների (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր և այլն) թափուր տեղերի համալրման մրցութային ընտրությունները.

10) սահմանված կարգի համաձայն շնորհում է պրոֆեսորի ու դոցենտի գիտական կոչումներ և ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը, շնորհում է համալսարանի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում է համալսարանի մեդալով, պատվոգրով, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար ներկայացնում է թեկնածություններ.

11) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների (ամբիոն, կենտրոն և այլն) ղեկավարների ամենամյա հաշվետվությունները, դրանց հիման վրա գնահատում նրանց գործունեությունը, սահմանում ստորաբաժանումների ինչպես նաև առանձին ծրագրերի ընթացիկ գործունեության արդյունքային ցուցանիշները, եթե դրանք սահմանված չեն կառավարման խորհրդի կողմից հաստատված փաստաթղթերում.

12) համալսարանի կանոնադրությունը, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում է կառավարման խորհրդին.

13) քննարկում և հրատարակման է երաշխավորում մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

14) քննարկում է հանրապետության հասարակական, կրթական, գիտական, մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող հարցեր, ըստ անհրաժեշտության ընդունում հայտարարություններ.

15) ստեղծում է գիտական խորհրդին կից աշխատանքային խմբեր, հանձաժողովներ, հանձնախմբեր, խորհուրդներ (էթիկայի հանձնաժողով, մեթոդական խորհուրդ և այլն), սահմանում դրանց կազմերի ձևավորման կարգն ու աշխատակարգը, հաստատում դրանց անհատական կազմը.

16) իրականացնում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են սույն կանոնադրությունից և ներքին այլ իրավական ակտերից.

17) իրականացնում է ՀՀ օրենսդրությունից բխող այլ լիազորություններ:

45. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը՝ 32 է: Գիտական խորհրդի անդամների 50%-ը ի պաշտոնե հադիսանանում են գիտխորհրդի անդամ, իսկ անդամների մյուս 50%-ը խորհրդի կազմում ընդգրկվում են համապատասխան ստորաբաժանումներում իրականացվող ընտրությունների արդյունքների հիման վրա: Գիտխորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել նաև այլ աշխատակիցներ:

46. Ի պաշտոնե գիտական խորհրդի անդամ են հանդիսանում համալսարանի ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, համալսարանի գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), ուսումնական հարցերի գրասենյակի, հետազոտական կենտրոնի, որակի ապահովման կենտրոնի ղեկավարները, ամբիոնների վարիչները, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավարը, գիտական ամսագրի խմբագիրը, ինչպես նաև՝ համալսարանի ռեկտորի որոշմամբ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ:

47. Գիտական խորհրդի մյուս անդամներն ընտրվում են համալսարանի մասնագիտական կրթագիտական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների (ամբիոններ և այլն) նիստերում՝ ըստ ամբիոններում առկա հիմնական աշխատողների դրույքների թվաքանակի համամասնության՝ համաձայն գիտական խորհրդի կանոնակարգի, ինչպես նաև սովորողները՝ ուսանողական խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված: Սովորողները կազմում են գիտական խորհրդի անդամների 25%-ը:

48. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել առկա, հեռավար կամ համակցված (առկա և հեռավար եղանակների զուգակցմամբ) եղանակներով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև՝ հարցման եղանակով: Խորհրդի նիստերը արձանագրվում են, իսկ հեռավար կամ համակցված եղանակով անցկացված նիստերը՝ նաև ձայնագրվում:

49. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ռեկտորի նախաձեռնությամբ կամ առավելագույնը երկշաբաթյա ժամկետում՝ գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

50. Գիտական խորհրդին կից ձևավորվում է մեթոդական խորհուրդ, որը կոչված է՝

1) քննարկել ուսումնամեթոդական աշխատանքներին առնչվող տարբեր հարցեր, նախապատրաստել գիտական խորհրդի հաստատմանը ենթակա փաստաթղթեր.

2) գիտխորհրդի հաստատմանը ներկայացնել ուսումնական պլաններից բխող առարկայական ծրագրերը.

3) առաջարկություններ ներկայացնել գիտական խորհրդին տարբեր նյութերի հրատարակման երաշխավորություն տալու վերաբերյալ.

4) իրականացնել համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

51. Մեթոդական խորհրդի գործունեության կարգը հաստատվում է գիտական խորհրդի կողմից: Մեթոդական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ինչպես գիտական խորհրդի անդամներ, այնպես էլ՝ խորհրդի անդամ չհանդիսացող համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

52. Ռեկտորատը համալսարանի ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածներում գիտական խորհրդի կողմից հաստատված գործունեության կարգով սահմանված լիազորությունների շրջանակում քննարկում է համալսարանի ընթացիկ գործունեությանը վերաբերող հարցեր: Ռեկտորատի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

53. Համալսարանի ընթացիկ ղեկավարումն իր իրավասության սահմաններում իրականացնում է գործադիր մարմինը՝ համալսարանի ռեկտորը: Համալսարանի ռեկտոր կարող է ընտրվել գիտամանկավարժական և վարչական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձ, գիտական աստիճան և կոչում ունեցող անձը: Ռեկտորի թեկնածուի կամ թեկնածուների առաջադրումը գաղտնի քվեարկությամբ իրականացնում է կառավարման խորհուրդը, իսկ առաջադրված թեկնածուներից մեկին ռեկտորի պաշտոնում ընտրում (նշանակում) է հիմնադիրների խորհուրդը՝ հինգ տարի ժամկետով: Եթե հիմադիրների խորհրդը կառավարման խորհրդի կողմից առաջադրված թեկնածուներից ոչ մեկին չի ընտրում ռեկտորի պաշտոնում, ապա հայտարարվում է նոր ընտրություն: Նոր ընտրությունների ժամանակ, եթե խորհրդի անդամների ձայների առնվազն 2/3-ի որոշմամբ առաջադրվում է մեկ թեկնածու, որը նախորդ անգամ ևս առաջադրվել էր, ապա հիմնադիրների խորհուրդը հաստատում է առաջադրված թեկնածուին ռեկտորի պաշտոնում: Նույն անձը չի կարող անընդմեջ երկու անգամից ավել ընտրվել համալսարանի ռեկտորի պաշտոնում:

54. Համալսարանի ռեկտորը՝

1) ղեկավարում է համալսարանի կրթական, գիտական, հետազոտական, տնտեսական, վարչական, ֆինանսական, միջազգային ու այլ գործունեությունը, ապահովում է հիմնադիրների խորհրդի, կառավարման խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարումը.

2) կազմակերպում է գիտական խորհրդի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները.

3) ներկայացնում է համալսարանը Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում, կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև՝ օտարերկրյա պետություններում, տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

4) կնքում է պայմանագրեր, բանկերում բացում է հաշիվներ.

5) կառավարման խորհդի հաստատմանն է ներկայացնում տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականի մասին հաշվետվությունները, ինչպես նաև համալսարանի կառուցվածքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները.

6) կառավարման խորհրդին է ներկայացնում համալսարանի տարեկան գործունեության, այդ թվում՝ ռազմավարական ծրագրի մասին հաշվետվություն.

7) կառավարման խորհրդի հավանությանը և հիմնադիրների խորհրդի հաստատմանն է ներկայացնում համալսարանի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ.

8) ծախսերի և եկամուտների նախահաշվին համապատասխան հաստատում է համալսարանի հաստիքացուցակը.

9) կնքում է աշխատանքային պայմանագրեր սահմանված կարգով ընտրված պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական և այլ տարակարգերի աշխատողներին, սահմանում է նրանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության շրջանակները.

10) սահմանված կարգով կարգապահական ներգործության միջոցներ է կիրառում աշխատողների և սովորողների նկատմամբ.

11) արձակում է ուսումնական, գիտական ու ընթացիկ գործունեությանը առնչվող հրամաններ, այդ թվում՝ ուսանողների, ասպիրանտների և հայցորդների ընդունելության, կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, տարեկետում տրամադրելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, զեղչեր, կրթաթոշակներ հատկացնելու, որակավորման աստիճան շնորհելու մասին.

12) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում համալսարանի պրոռեկտորներին՝ սահմանելով նրանց գործունեության ոլորտներն ու պարտականությունները.

13) իր բացակայության ժամանակ համալսարանի ռեկտորի պարտականությունների կատարումը հանձնարարում է պրոռեկտորներից մեկին.

14) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

55. Համալսարանի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ են համարվում ամբիոնները, բաժինները, կենտրոնները, լաբորատորիաները, գրադարանը, վարժարանը և այլն: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և իրենց գործունեության կանոնակարգերով:

56. Համալսարանն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական և գիտական միասնական համակարգ է:

57. Ամբիոնները համալսարանի ուսումնագիտական գործընթացը կազմակերպող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են սույն կանոնադրության և ամբիոնի գործունեության կարգի հիման վրա: Ամբիոնն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում սույն կանոնադրությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

58. Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը, որը պաշտոնի նշանակվում և ազատվում է ռեկտորի կողմից հինգ տարի ժամկետով համալսարանի գիտական խորհրդի սահմանած կարգով (մրցույթ, կամ ժամանակավոր պաշտոնավարում մինչև մրցույթի կազմակերպումը): Ամբիոնի վարիչը՝

1) ղեկավարում է ամբիոնի կրթական, գիտական, հետազոտական, միջազգային և այլ գործունեությունները.

2) ապահովում է համալսարանի կառավարման մարմինների որոշումների իրագործումը.

3) սահմանված կարգով մասնակցում է ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու և այլ հարցերի քննարկումների.

4) համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում տարեկան հաշվետվություններ.

5) համակարգում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքները.

6) պատասխանատվություն է կրում ամբիոնի ուսումնագիտական աշխատանքների պատշաճ կազմակերպման, համապատասխան վարչական գործընթացների ժամանակակից և արդյունավետ իրագործման համար.

7) իր պաշտոնի նկարագրության համապատասխան ունի այլ իրավունքներ և պարտականություններ:

59. Ամբիոնի գիտամանկավարժական կազմը բաղկացած է պրոֆեսորներից, դոցենտներից, ասիստենտներից, և դասախոսներից: Համալսարանի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական կարգավիճակով աշխատանքի ընդունումը (ավելի քան մեկ տարի ժամկետով) կատարվում է սահմանված կարգով անցկացվող մրցույթի հիման վրա:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

60. Համալսարանում կրթությունը իրականացվում է պետական կրթական չափանիշներին համապատասխան, և կիրառվում է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգ: Համալսարանում գործում է որակի ապահովման և վերահսկման համակարգ, որի նպատակը կրթության որակի շարունակական բարելավումն է:

61. Ուսուցման յուրաքանչյուր աստիճանում շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում և դիպլոմ կամ վկայական: Էրացուցիչ կրթության ծրագիրն ավարտած անձանց տրվում է սահմանված նմուշի փաստաթուղթ (վկայական, հավաստագիր):

62. Համալսարանում ուսումնառությունը կազմակերպվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի դրույթներին համահունչ: Ուսուցումը կարող է իրականացվել առկա, հեռակա, դրսեկության և հեռավար ձևերով, ինչպես նաև՝ այդ ձևերի համադրմամբ (հիբրիդային ձև):

63. Ուսանողների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելությունը համալսարան կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

64. Համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակից բաղկացած ուսումնական տարով, յուրաքանչյուր կիսամյակ ավարտվում է քննաշրջանով:

65. Համալսարանում սահմանվում են ուսումնական պարապմունքների հետևյալ հիմնական տեսակները՝ դասախոսություններ, գործնական դասեր (սեմինար), լաբորատոր և անհատական պարապմունքներ, մանկավարժական, մասնագիտական, նախաավարտական պրակտիկա, խորհրդատվություն և ինքնուրույն աշխատանքներ:

66. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց կարող է տրվել համալսարանի կողմից սահմանված ակադեմիական տեղեկանք:

67. Համալսարանում գործում է գիտական խորհրդի կողմից սահմանված սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների պարբերական գնահատման բազմագործոն համակարգ:

68. Համալսարանում կատարվում են գիտահետազոտական և ստեղծագործական աշխատանքներ՝ գիտական խորհրդի կողմից հաստատված պլաններով, անցկացվում են գիտական համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ:

69. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել համալսարանի դասախոսները, գիտաշխատողները, ասպիրանտները, հետազոտողները և ուսանողները, ինչպես նաև՝ պայմանագրային կարգով հրավիրված այլ մասնագետներ:

70. Համալսարանի կողմից հրատարակվում է գիտական պարբերական, որի գործունեության կարգը սահմանվում է գիտական խորհրդի կողմից:

VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

71. Համալսարանի աշխատողները բաժանվում են պրոֆեսորադասախոսական, գիտական, վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական և այլ տարակարգերի: Համալսարանի սովորողներն են ուսանողները, ասպիրանտները, հայցորդները, ինչպես նաև՝ աշակերտները:

72. Համալսարանի աշխատողների և սովորողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ներքին կանոններով և համալսարանի այլ ակտերով:

73. Համալսարանի աշխատողները իրավունք ունեն՝

1) մասնակցելու համալսարանի գործունեությանն առնչվող խնդիրների քննարկմանը, կառավարման մարմիններին ներկայացնել առաջարկություններ.

2) օգտվելու համալսարանի ուսումնական, գիտական, մարզական, սոցիալ-կենցաղային և այլ ստորաբաժանումների վճարովի և անվճար ծառայություններից.

3) ՀՀ օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով բողոքարկելու կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները.

4) ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված չափով և ժամկետներում ստանալ աշխատավարձ, լրավճարներ, պարգևավճարներ, ինչպես նաև՝ պարգևատրումներ և խրախուսումներ.

5) մասնագիտական և աշխատանքային գործունեության համար ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ.

6) ըստ նախասիրության մասնակցել գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների, անցնել վերապատրաստման դասընթացներ:

7) ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

74. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները սահմանված կարգի համաձայն իրավունք ունեն ընտրել ներկայացուցիչներ համալսարանի կառավարման և գիտական խորհուրդներում, իսկ հիմնական աշխատողները նաև ընտրվել վերոհիշյալ մարմինների կազմում:

75. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով: Գիտամանկավարժական աշխատողների, ուսանողների համար ստեղծվում են գիտական ճշմարտության ազատ որոնումների, շարադրման և տարածման նպաստավոր պայմաններ՝ այդ նպատակներին հատկացված միջոցների սահմաններում:

76. Համալսարանի աշխատողները պարտավոր են՝

1) պահպանել և կատարել ՀՀ օրենսդրության, սույն կանոնադրության, համալսարանի ներքին կարգապահական կանոնների, էթիկայի կանոնների (բարեվարքության կանոնակարգի) և ներքին իրավական այլ ակտերի պահանջները.

2) պահպանել աշխատաժամանակի ռեժիմը, արդյունավետ և աշխատանքային նկարագրին համապատասխան օգտագործել աշխատանքային ժամերը, կատարել համալսարանի ղեկավար մարմինների օրինական որոշումները.

3) ապահովել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը.

4) պարբերաբար բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը, անցնել վերապատրաստում՝ համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով.

5) պահպանել և արդյունավետորեն ու խնայողաբար օգտագործել համալսարանի գույքը.

6) հոգալ համալսարանի հեղինակության բարձրացման մասին:

77. Այն աշխատողները, ովքեր չեն կատարում կանոնադրության 76-րդ կետով սահմանված պարտականությունները, սահմանված կարգով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի կամ օրենքով սահմանված կարգով ազատվել աշխատանքից:

78. Համալսարանի պրոֆեսորադասախոսական և գիտական կազմն ունի՝

1) մասնագիտական գործունեության կազմակերպման և նյութատեխնիկական ապահովման իրավունք.

2) գիտական հետազոտության ակադեմիական ազատության իրավունք.

3) սեփական նախաձեռնությամբ հետազոտական թեմաներ ընտրելու ու մշակելու ազատության իրավունք.

4) պետական կրթության չափորոշիչներին համապատասխան ուսումնական դասընթացների բովանդակության, ծրագրերի ազատ որոշման իրավունք.

5) անհատական առանձնահատկություններին համապատասխանող և ուսումնական գործընթացի բարձր որակն ապահովող նյութի շարադրման, դասավանդման մեթոդների ու միջոցների ազատ ընտրության իրավունք.

6) համատեղությամբ գիտական, մանկավարժական և այլ բնույթի աշխատանքներ կատարելու իրավունք:

79. Գիտության և մանկավարժության բնագավառներում ակնառու նվաճումների համար համալսարանի աշխատողներին շնորհվում են համալսարանի մրցանակներ:

80. Համալսարանի ուսանողներ են համարվում սահմանված կարգով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ռեկտորի կողմից հրամանագրված և բարձրագույն մասնագիտական կրթության կրթական որևէ ծրագրով ուսումնառող անձինք:

81. Համալսարանի ուսանողն իրավունք ունի՝

1) ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ.

2) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին.

3) գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը, համալսարանի կառավարման մարմիններին ներկայացնելու ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ առաջարկություններ.

4) օգտվելու (անվճար և վճարովի հիմունքներով) համալսարանի գրադարանից, մարզական և առողջարանային, մշակութային-լուսավորչական ծառայություններից.

5) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու որակավորման երկու աստիճան.

6) մասնակցելու ուսանողական ինքնակառավարման մարմնի՝ ուսանողական խորհրդի ընտրություններին և նրա կողմից իրականացվող աշխատանքներին.

7) սահմանված կարգով ընդգրկվելու համալսարանի կառավարման մարմիններում.

8) մեկ ուսումնական տարվա ընթացքում ստանալու ընդհանուր առնվազն տասը շաբաթ տևողությամբ արձակուրդ, որից ութ շաբաթը ամառային, երկուսը՝ ձմեռային:

82. Համալսարանն իրավունք ունի սահմանելու անվանական կրթաթոշակներ, ինչպես նաև ուսուցումը խրախուսող բարոյական ու նյութական խթանման այլ ձևեր:

83. Արգելվում է ուսանողներին ուսումնական գործընթացով չնախատեսված աշխատանքներում ներգրավելը՝ առանց վերջիններիս կամ նրանց ծնողների (անչափահաս ուսանողների դեպքում՝ օրինական ներկայացուցիչների) համաձայնության, ինչպես նաև արգելվում է ուսանողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցներ կիրառելը:

84. Համալսարանի ուսանողները պարտավոր են՝

1) սահմանված ժամկետներում կատարել ուսումնական առաջադրանքները,

2) տիրապետել բարձր որակավորմամբ ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին.

3) պահպանել համալսարանի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները, էթիկայի կանոնները և ներքին իրավական այլ ակտերով նախատեսված պահանջները.

4) հաճախել դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին.

5) բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը.

6) ժամանակին վճարել սահմանված ուսման վարձը:

85. Ուսանողի այլ իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, ԵՄՀ ներքին այլ իրավական ակտերով: Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանով նախատեսված առաջադրանքները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են համալսարանի ներքին կարգապահական կանոնները, էթիկայի կանոնները և ներքին իրավական այլ ակտերով նախատեսված պահանջները համալսարանի ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի, որոնք կարող են հանգեցնել համալսարանից հեռացվելուն: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում ուսանողները կարող են հեռացվել համալսարանից:

86. Համալսարանի ուսումնական պլանները կատարած ուսանողներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ):

87. Համալսարանի ուսանողության ինքնակառավարման, ներկայացուցչական և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որը ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր և իրականացնում է ուսանողական խորհրդի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ: Ուսանողական խորհրդի կանոնադրությունը և նրանում կատարված փոփոխությունները հաստատվում են կառավարման խորհրդի կողմից:

VII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

88. Համալսարանի գույքը ձևավորվում է հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով հանձնված, անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով նրան ամրացված և համալսարանի գործունեության ընթացքում ստեղծված ու ձեռք բերված գույքից:

89. Համալսարանը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրեն նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի, իրեն ամրակցված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ

եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ ունի սեփականության իրավունք: Համալսարանն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

90. Ձեռնարկատիրական գործունեության հետևանքով ստացված շահույթն ուղղվում է համալսարանի կանոնադրական խնդիրների իրականացմանը:

91. Համալսարանն իրավունք ունի հիմնադրի կողմից սահմանված կարգով վարձակալության հանձնելու իր գույքը և վարձակալելու գույք:

92. Համալսարանի գործունեության նկատմամբ վերահսկողություն են իրականացնում հիմնադիրները, կառավարման խորհուրդը, կրթության պետական կառավարման լիազոր մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

93. Հաստատության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

94. Համալսարանի վերակազմակերպումը (միացում, միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) և լուծարումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

IX. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

95. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում 2023 թ. ապրիլի 15-ից:

96. Սույն կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո դադարեցվում է գործող գիտական խորհրդի կազմի լիազորությունները և կանոնադրության 45-47 կետերի համաձայն ձևավորվում է գիտական խորհրդի նոր կազմ:

97. 2023 թ. մայիսի 1-ին դադարեցվում է գործող կառավարման խորհրդի կազմի լիազորությունները և կանոնադրության 25-30 կետերի համաձայն ձևավորվում է Կառավարման խորհրդի նոր կազմ:

98. Սույն կանոնադրությունում փոփոխություններն ու լրացումները (2022 թ. խմբագրությամբ) հաստատելուց մեկ տարի անց լուծարվում է համալսարանի գործող ռեկտորի հետ կնքված պայմանագիրը և կանոնադրությամբ սահմանված կարգով անցկացվում են ռեկտորի ընտրություններ:

99. Սույն կանոնադրությունը ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում համալսարանի կառավարման մարմինները սույն կանոնադրությամբ սահմանված կարգով փոփոխություններ և լրացումներ են կատարում համալսարանի ներքին իրավական ակտերում՝ առաջնորդվելով կանոնադրությամբ սահմանված նորմերով: